Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Անահիտ Ավանեսյան, առողջապահության նախարար

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

2024 թվականի մայիսի 13-15-ը, Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի)

3. **Հրավիրող կողմը**

4. ԱՄԷ Առողջապահության դեպարտամենտ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Այցի նպատակն էր մասնակցել «Աբու Դաբիի Առողջապահության համաշխարհային շաբաթի» շրջանակներում իրականացվող միջոցառումներին, հանդես գալ որպես բանախոս «Առողջապահության ոլորտի առաջնորդներ» (Health Leaders Forum) հատուկ ֆորումին, մասնավորապես՝ «Առողջության հավասարություն և պահպանում» (Global health equity and sustainability) պանելային քննարկմանը: Վերջինիս շրջանակներում ներկայացրել եմ ՀՀ առողջապահության ոլորտը, ընդգծել նախորդ տարիների դժվարությունները (սահմանային անհանգստություններ, կորոնավիրուսային համավարակ), վերջիններիս հաղթահարման մեխանիզմները, քաղած դասերը: Զեկույցի ընթացքում հատուկ անդրադարձ արվեց ԱԱՊ ոլորտում իրականացվող բարեփոխումներին, աղետների և արտակարգ իրավիճակներում արագ արձագանքմանը, պացիենտակենտրոն բժշկության մոտեցմանը:

Այցի նպատակներից էր նաև հանդիպումներ ունենալ միջոցառման մասնակից երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ՝ քննարկելու

առողջապահության բնագավառում հնարավոր համագործակցության ուղղությունները:

Մասնակցել եմ “TONY ELUMELU” հիմնադրամի կազմակերպած կլոր-սեղան քննարկմանը, ինչպես նաև հանդիպել եմ “DAMAN” ապահովագրական կազմակերպության ներկայացուցիչների հետ: Վերջիններիս հետ քննարկվել են համապարփակ ապահովագրության ոլորտում համագործակցության քայլերը: “DAMAN” կազմակերպության միջոցով նաև կապ է հաստատվել “RAFED” կազմակերպության ներկայացուցիչների հետ: Ի շարունակություն Աբու Դաբիում “RAFED” կազմակերպության հետ հանդիպման՝ ս.թ. մայիսի վերջ ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվելու է առցանց հանդիպում՝ նախանշելու նշյալ կազմակերպության հետ մատակարարման ոլորտում համագործակցության հնարավոր ուղիները:

6. Քննարկված թեմաները

Այցի շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել Եգիպտոսի Արաբական Հանրապետության առողջապահության և ազգաբնակչության նախարար Խալեդ Աբդել Ղաֆֆարի հետ: Քննարկվել են մի շարք ոլորտներում, այդ թվում՝ դեղագործության ոլորտում համագործակցության հնարավորությունները: Խալեդ Աբդել Ղաֆֆարին ներկայացրել է Եգիպտոսի առողջության համապարփակ ապահովագրության ներդրման փորձը և հետաքրքրվել էլեկտրոնային առողջապահության ոլորտում Հայաստանի հետ համագործակցության հնարավորություններով:

Միջոցառման շրջանակներում հյուրընկալվել եմ Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահական պալատում: Հանդիպում է կայացել ԱՄԷ նախագահ Շեյխ Մուհամմադ Բին Զայեդ Ալ Նահյանի և ԱՄԷ Առողջապահության դեպարտամենտի նախագահ Մանսուր Իբրահիմ Ալ Մանսուրիի հետ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Առողջապահության առաջնորդների ֆորումին» հանդես եմ եկել որպես բանախոս՝ կիսվելով Հայաստանում առողջապահության ոլորտի վերջին

ձեռքբերումներով և հեռանկարներով, նորարարության խթանմանն ուղղված աշխատանքներով և մարտահրավերները դիմակայելու փորձով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը Հայաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև: Երկու կողմերն էլ առողջապահության ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ տանելու պատրաստակամություն են հայտնել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել կողմերի հետ փոխգործակցությունն ու կապերը: Արաբական կողմը պատրաստակամություն է հայտնել համագործակցել Առողջության համապարփակ ապահովագրության ոլորտում: Մեր կողմից պատրաստակամություն ենք հայտնել աջակցել բուժքույրերի փորձի փոխանակման հարցում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2024 թ. մայիսի 20

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1239-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 429-Ա 10.05.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — Նախարար Անահիտ Ավանեսյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը — Արաբական Միացյալ Էմիրություններ ք.Աբու Դաբի
5. Գործուղման ժամկետները — 2024թ.մայիսի 13-15-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը — Գիշերավարձ, օրապահիկ,ճանապարհածախս
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման կարգերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	0.0		0
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0.0		0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		0.0
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0.0		0.0

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը _____ (ստորագրություն) 14.05.2024թ.